

Լ. ՄԵԼԻԲՍԵՔ, ԲԵԿ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
1951 թ. № 4 «Տեղեկագրից»

891.99.0927
15-51 համար

27 JUN 2013

70018

897.99.092
U-51

-6 NOV 2011

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1951 *Общественные науки*

Լ. Մելիքյան-Բեկ
(Հայկական ՍՍՌ ԳԱ-ի բժշկական ամսագրից)

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վրաց աշխատավորության կողմից առանձնապես սիրված հեղինակներ Բաֆֆուց, Գ. Սունդուկյանից և Հ. Թումանյանից հետո Ավետիք Իսահակյանը թերևս միակն է հայ կլասիկներից, որը բացառիկ ժողովրդականություն է վայելում ժամանակակից Վրաստանում:

Եվ դա միանգամայն հասկանալի է. Ավ. Իսահակյանի քնարը՝ ձայնակցելով վրացական պոեզիայի ամենապայծառ առողերից՝ Նիկո Բարաթաշվիլու, Ակակի Ծերեթելու, Վաթա Փշավելայի և Իոսեթ Գրիշաշվիլու ստեղծագործությանը՝ իր ամբողջ էությունով հարազատ է հնչում վրաց ընթերցողի սրտին ու մտքին:

* * *

«Աբու-Լալա-Մահարի» վրացերեն թարգմանության առթիվ 1929 թ. նոյեմբերի 19-ին Երևանում գրած իր երկտողում, որն առայժմ միմիայն վրացերեն թարգմանությամբ է առկա նույն պոեմի 1931 և 1936 թթ. հրատարակություններում, Ավ. Իսահակյանը, ի միջի այլոց, նշում էր իր և Ն. Բարաթաշվիլու ստեղծագործական ուղիների որոշ ազդակցության մասին:

«Ես ինձ երջանիկ եմ զգում,—գրում էր Ավ. Իսահակյանը,—որ իմ «Աբու-Լալա-Մահարի» պոեմը մեծագույն Շոթա Ռուսթավելու անմահ լեզվով եմ տեսնում:

Ուրախ եմ և ի վիճակի եմ հայտարարելու, որ իմ ավագ եղբայր Նիկո Բարաթաշվիլին եղավ այս պոեմի ներշնչողը:

Նրա սքանչելի «Պեգասը» մինչ ինքնամոռացություն հափշտակեց ինձ: «Աբու-Լալա-Մահարի» քարավանը Բարաթաշվիլու «Պեգասի» հետքով է ընթանում:

Ավ. Իսահակյանի այս խոսքերից կարելի էր, իհարկե, հապճեպ ել թյուր եզրակացություն հանել Ն. Բարաթաշվիլու «Պեգասի» («Մերանի») «Աբու-Լալա-Մահարի» վրաց գործած «ազդեցության» մասին, ինչպես օրինակ՝ Ադամ Միցկևիչի «Ֆարիս»¹ է գործել Դանիել Վարուժանի «Բեգասի» վրա:² Սակայն, ինչպես և մի այլ առիթով մենք արդեն նշել ենք³, Ն. Բարաթաշվիլու և Ավ. Իսահակյանի հիշյալ երկերը, մի կողմից, շատ մոտ են իրար, մասնավորապես իրենց չափով, իսկ մյուս կողմից՝ իրարից տար-

¹ Адам Мицкевич, Собрание соч., т. I. Москва, 1948, стр. 173—177.

² Դանիել Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 260—267:

³ Լ. Մելիքյան-Բեկ, Ն. Բարաթաշվիլին և հայ գրականությունը. «Գրական պրպտություն» 3, Թբիլիսի, 1947, էջ 110—112, 115—116 (վրացերեն):

1953-99

բեր. Եվ դրանց էական տարբերությունը, բացի բովանդակության հիմնական շարքի հերթից, առանձնապես նկատվում է ղեկամիկայում:

Սակայն, անկախ դրանից, թե Պեգասը (Մերանին) և թե քարավանը՝ ձգտելով դեպի լույս արևը՝ լավատեսություն հեռանկարներով են օժտված: Ըստ Ն. Բարթալաշվիլու (Ս. Ավչյանի թարգմանությամբ)¹

Սըլաքիբ նըժուլդ, քո ընթացքն արդ չունի սահման,
Եվ տնւր դու հովին իմ մըտքերը միշտ սովոր հուզման:
Ճեղքիբ դու հողմը, կիսիբ և ալիբ, անցիբ ու գընա սարեր ու ձորեր,
Սըլաքիբ արագ և դու կըրճատիբ իմ, անհամբերիս, անցնիլիբ օրեր...
Սըրտիս տընքոցը՝ սիրո բեկոր՝ տամ հուզված ծովին
Եվ քո գեղեցիկ, ոգևորված խելառ արշավին...

Ըստ Ավ. Իսահակյանի՝

Աբու-Մահարին արծուի նման աչքերն անքնթիթ՝ արևին հառած,
Թըռչում էր աննինջ, հոգին լուսաբաց և երջանկության ջահերով վառված.
Եվ ոսկեփրփուր ծիրանին ուսին Սրու-Մահարին, մեծ բանաստեղծը,
Թըռչում էր անդուլ՝ հաղթական ու վեհ, դեպի արևը, անմահ արևը...

* * *

Նույն երկտողում, գրված «Աբու-Լալա-Մահարիի» վրացերեն թարգմանության առթիվ, Ավ. Իսահակյանը, ի միջի այլոց, նշում էր, որ «Ա. Ղազրեգիի «Էլզուլան»² և աշուղ Նահապետ Բուշակի տաղերը նրան սիրել տվին վրացուն, և նրանց շնորհիվ Վրաստանն ու վրացիները նրա համար հարազատ դարձան»:

Նկարագրելով 1926 թվին Եվրոպայից առաջին անգամ Սովետական Հայաստան վերադարձի ճանապարհորդությունը, երբ վարպետը Բաթումից գնացքով անցնում էր Վրաստանով դեպի Ներևան և ունկնդիր էր «ուղեկից վրացիների զվարթ զրույցներին, որոնց հնչյունները հարազատ էին թվում» նրան և ցավ պատճառում, որ նա չի «սովորել... դարավոր դրացու լեզուն» Իսահակյանը իր «Վրաց գուսանի երգը» հուշիկում նշում է.

«Մեկուսի նստած՝ մտքով սլացել էի հին հուշերիս մեջ—ինչքան վրացի եմ ճանաչում. մեկ-մեկ պատկերացնում եմ նրանց: Ուր և ինչ պայմաններում: Նրեակայությունս մեջ իրականանում են շատ դեմքեր:

Վերհիշեցի Վրաստանի մասին կարգացածս գրքերը: Վերհիշեցի վրաց գրականությունից կարգացածս երկերը—Ղազրեգիի լեռնաշունչ վեպերը, Բարթալաշվիլու մըրկաբաշ Պեգասը, Վաթա Փշավելայի արծվային կանչերը: Թվաց թե՛ ականջիս վերհիշեցին վրաց ժողովրդական կենսային երգերը,

¹ Ն է կ ո լ ո գ Բ ար ա թ ա շ վ ի լ ի, Հատընտեր, Թարգմ. Ս. Ավչյանի, Լ. Մելիքսեթ-Քեկի թարգմանությամբ, Թբիլիսի 1946, էջ 37—39: Հմմտ. սույն երկի հայերեն թարգմանությունները այլևայլ վերնագրերով՝ «Ենթուլդ», «Պեգաս», «Հրեղեն ձի», «Մերանին»՝ Հ. Կոստանյանի («Տարազ» 1893 թ. № 15), Գ. Մելոյանի («Մարտակոչ» 1923 թ. № 76 և «Պորբրդային Վրաստան» 1939 թ. № 186), Գ. Ասատուրի («Նորք» 1927 թ. № 1 և «Մերձարևելքի գրականության պատմությունը» 1, 1931), Վ. Սիմոնյանի («Պորբրդային Վրաստան» 1938 թ. № 71), Ս. Ավչյանի («Սովետական Վրաստան» 1945 թ. № 75), Սողոմոն Տարոնցու («Սովետական Վրաստան» 1945 թ. № 223):

² Ա. Մ ո չ ի ու ռ ար ի ձ ի «Էլզուլան», վեպ, վրացերենից թարգմանեց Տ. Փիլիմոնյանը, Թբիլիսի 1893, հմմտ. Ավ. Ղազրեգի, «Պատմվածքներ», Ներևան, 1948, էջ 3—134:

երբ ես տակավին շատ երիտասարդ, ամբողջ տասն օր դեգերեցի Ռադեֆավրական ճանապարհում և իջևաններում՝ Վլադիկավկազից Թիֆլիս անցնելիս: Եվ աչքիս առաջ կենդանացան այն ումանտիկ հովիտների վրացուհիները՝ աչազեղ և սլացիկ, և նրանց պարերը եղնիկի քայլերի նման թեթև», և այլն:

Ն. Բարթալաշվիլու «մըրկաբաշ Պեգասին» կից՝ Ա. Ղազրեգիի (Մոչ-խուրարիձեի) «Լեռնաշունչ վեպերի» և Վաթա Փշավելայի «արծվային կանչերի» հիշատակությունը ևս Ավ. Իսահակյանի հուշիկում ապացուցում է մեր վարպետի ծանոթությունը վրաց կլասիկ գրականության գոհարների հետ՝ գոնե այն աստիճանով, որքան որ վերջինները մատչելի էին նրան հայերեն (մասամբ նաև ռուսերեն) թարգմանությամբ¹:

Ավ. Իսահակյանը հայ-վրացական համերաշխության մեծ ջատագովն է, որն արտահայտվում է, ի միջի այլոց, վրաց գրողների հետ սերտ կապ հաստատելու ու համագործակցության մեջ:

Այսպես, օրինակ, 11 տարի սրանից առաջ Ավ. Իսահակյանը վրաց գրողների ուղեկցությամբ ճանապարհորդեց Վրաստանի այլևայլ վայրերը՝ նպատակ ունենալով ի մոտո ծանոթանալու վրաց ժողովրդի անցյալին ու ներկային:

Այդ ճանապարհորդության տպավորությունները վրաց բանաստեղծ Սիմոն Չիքովանին նկարագրում է այսպես.²

«Սրանից մի քիչ առաջ Ավետիք Իսահակյանը ժամանեց Վրաստան և սովետական վրաց գրողների հետ միասին ճանապարհորդեց մեր երկրի այլևայլ անկյունները, ծանոթանալով վրաց ժողովրդի նոր կենցաղին, նրա նվաճումների և կուլտուրական շինարարության հետ: Ընդ սմին նա մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ դիտում էր վրացական կուլտուրայի հնագույն հուշարձանները:

Վրաստանում ճանապարհորդության միջոցին ստացած տպավորությունները, վրաց ժողովրդի կյանքի ուսումնասիրությունը և մեր ժողովրդի մշակույթի հուշարձանների հետ ծանոթանալը Ավ. Իսահակյանին ընդհուպ նոր ստեղծագործական նյութ, որը պետք է մտնի նրա «Ուստա Կարո» մեծ վեպի մեջ:

Հիշում եմ, թե ինչպես էր նա հետաքրքրվում ժողովրդական հերոս Արսենա Օձելաշվիլու անձով, նրա պայքարով ու կյանքով³:

Բանաստեղծն այցելեց Օձելաշվիլու գերեզմանը Մցխեթայում, հետքերեց ծաղիկներ և հարգեց վրաց ժողովրդական մարտիկի հիշատակը:

Ոչ պակաս նշանակալից են Ավ. Իսահակյանի համապատասխան ելույթները հայ-վրացական բարեկամության մասին:

¹ Ա. Ղազրեգիի երկերը հրատարակվել են կոմ առանձին գրքերով, ինչպես «Էլզուլան» (Թիֆլիս, 1893), «Փաթի» (Ալեքսանդրոպոլ, 1904), «Արսենա» (Թիֆլիս, 1907), կամ հայ պարբերականներում («Մուրճ» 1894 թ., «Տարազ», 1893 և 1894 թթ.) Վաթա Փշավելայի «Լեռնա աղբյուրը» «Գեղարվեստ» III, 1909:

² Ս ի մ ո ն Չ ի չ ո վ ա ն ի. Ավետիք Իսահակյան «Լիտ. Սաքարթվելո», 1941 թ. № 5 (վրացերեն): С. Чиковани. Аветик Исаакян, „Заря Востока“, 1940 г. № 298.

³ Արսենի պոեմ ռուսերեն թարգմանությամբ՝ „Песнь об Арсене“, Перевод с грузинского Александра Чачикова, Москва, 1938 и 1941 նույնը՝ „Поэзия Грузии“, Антология, Москва, 1949, стр. 46—54.

Իր ծննդյան 65-ամյակի առթիվ Վրաստանի օտվետական գրողների կազմակերպած հորեկյանական երեկույթում արտասանած ճառում վարպետը, ի միջի այլոց, ասում էր¹.

«Չեմ կարող թաքցնել այն հպարտ զգացմունքը, որ ունեմ այսօր այն բարձր պատվի համար, որ արժանացնում է ինձ Օտվետական Վրաստանի գրողների Միությունը եղբայրական Վրաստանի այս շքեղ մայրաքաղաքում, ուր անցրել եմ երիտասարդության խանդավառ տարիներս և որն այնքան մոտ է, թանկագին է և միշտ կենդանի է իմ սրտում:

Այս մեծարանքը իմ գրական համեստ գործի հանդեպ և ի դեպս որոշ չափով նաև հայ մեծ գրականության հանդեպ՝ բազմաթիվ և բազմաթիվ խոշոր ու մանր փաստերից մեկն է երկու հնադարյան բարեկամ տաղանդավոր ժողովուրդների համակրության, սրտակցության, միմյանց հասկացողության:

Գալով իմ մասին, սիրելի բարեկամներ, ես պետք է խոստովանեմ, որ միշտ էլ իմ վրացի գրչի ընկերները եղբայրական սիրով ընդունել են ինձ, հարգել և հյուրասիրել և ավելին՝ պատվել են ինձ, իմ գործերը ներկայացնելով վրաց հասարակությանը անգուցական Շոթայի սքանչելի լեզվով:

Ինչ անկշռելի բերկրանք էի վայելում ես, երբ անցյալ ամառը չքնաղ Վրաստանում շրջագայելիս հանդիպում էի վրացի ուսանող և ուսանողուհիների, որոնք ճանաչում էին ինձ և հատվածներ էին արտասանում իմ «Արու-Նալա-Մահարիից» և «Սասմա Մհեր» պոեմայից, որ այնպես հմտությամբ և սիրով թարգմանել է մեր հարգելի ընկեր Միքել Պատարիձեն²:

Ես էլ ունեմ բավական թվով հայացողներ վրաց հոյակապ գրականությանը³ և գեղեցիկ ֆուլյուրից, և ունեմ նույնպես ինքնուրույն գրչվածքներ վրաց հին և նոր հերոսամարտի գրվածքներից:

Համաշխարհային գրականության մեջ ես ունեմ իմ մշտական սիրելի լազույն ուղեցույցներ և խորհրդատուները—Հոմերոս, Սադիկ և Նիզամի, Բայրոն և Շիլլեր, Գյոթե և Հայնե, Միքելեիչ և Լեոնտոսով, և նրանց հետ միասին Շոթա Ռուսթավելի և Բարաթաշվիլի: Նրանք թինդ են հանել իմ հոգին և իրենց միջոցով անչափ սիրելի են դարձրել և անչափ հարազատ իմ սրտի համար իրենց հայրենիքները:

Երբ ես, ինչպես ասացի, անցյալ տարի իմ գրական նպատակների համար շրջում էի Կախեթում և Իմերեթում, տեղն ու տեղը, մայր հողի վրա տեսնելու՝ տիպեր, կենցաղ, լեզու ֆուլկլորն ու մեղսք—ինձ այնպես թվաց թե՛ վաղուց եղել եմ այդ վայրերում, վաղուց շնչել եմ նրանց հոգեկան մթնոլորտում, վաղ մանկությունից շառաչել են ինձ վրա այդ վայրերի դարավոր սոսիններն ու կաղնիները:

Սիրելի ընկերներ, իհարկե, ամեն մի երկիր ու ժողովուրդ իր ուրույն դեմքն ու հոգին ունի, և այս շատ գեղեցիկ է: Բայց ինչպե՞ս ինձ, ոչ վրացու համար՝ այնքան ծանոթ և հարազատ էին նրանք⁴:

¹ «Օտվետական Վրաստան», 1941 թ., № 36.

² Նկատել ունի՝ Ավետիք Իսահակյան, «Սասմա Մհեր» պոեմը, թարգմանեց արձակ Հարություն Միքիմանյան, չափածոյի վերածնեց Միքել Պատարիձեն, «Սասունցի Գավթ» ժողովածու, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի խմբագրությամբ, Պատհամալսարանի հրատարակչություն, Թբիլիսի, 1939, էջ 135—136 (վրացերեն):

³ Առայժմ հրատարակված են թարգմանություններ Ա. Մելիքսեթից և Ի. Գրիշաշվիլուց միայն:

Ավ. Իսահակյանը այդ հարցին, ինչպես և այն հարցին, թե ինչով բացատրել երկու հարևան ժողովուրդների կուլտուրաների ազդեցությունը, պատասխանում է թե 1941 թվին Թբիլիսիում ունեցած ելույթում¹ և թե 1942 թվին Նրեանում հրապարակած «Անգրկովկասի ժողովուրդների եղբայրությունը անասանելի է» հոդվածում²:

Սրանից առաջինում վարպետը գրել է.

«Դա բխում է եկեղեցական, խոր զգայական, հին և հնազույն խավերից, որոնք զնում, սուզվում են պատմական և նախապատմական մշտնջերի մեջ: Հայ և վրաց ժողովուրդները դարերի սկզբներից, միֆական Մհեր-Սամիրանի շրջաններից, եղել են ուղեկիցներ, դորձակիցներ: Միասին կերտել են, յուրաքանչյուրը պահելով իր ինքնատիպությունը, այն փառավոր զարմանալի կուլտուրան, որ բովանդակ Օտվետական Միություն կուլտուրաների մեջ ամենահինն է անկերպահորեն վկայված:

Միասին գոյություն արյունոտ, անսահանջ կռիվ են մղել օտարերկրյա նվաճողների դեմ: Եղել են դաժան ժամանակներ, երբ Հայաստանը վահան է հանդիսացել մոնղոլական հոսսակների դեմ³, իսկ Վրաստանը հյուրընկալող եղբայրական ապաստան հայերի համար:

Հայտնի է, որ գոյություն է ունեցել երկու ժողովուրդների միջև մի սրբագործված սովորություն, ազգերի պատմության մեջ մի հուզիչ եզակի սիմվոլ: Որպեսզի ավելի ամրապնդեն եղբայրությունը—շատ տեղերում, ուր խառն են ապրել վրացի և հայ, վրացի մայրերը կաթ են տվել հայ երեխաներին և փոխադարձաբար⁴:

Անվերջ կարելի է թվել համադորձակցական փաստեր հին, միջին և նոր դարերից... Կուլտուրական փոխադարձ ազդեցություններ և փոխառումներ, թարգմանություններ մեկը մյուսից, մեր երկու բարեկամ ժողովուրդների գիտնական վարպետների փոխադարձ այցելություններ:

Այսպիսի սերտ գործակցությամբ պահել են մեր ժողովուրդները իրենց ազգային նվիրական գանձերը—ոգի, ոճ, լեզու, ֆուլկլոր, գրականություն:

* * *

Վրաստանի անցյալն ու ներկան և առհասարակ վրաց իրականությունը, որին Ավ. Իսահակյանը քաջ ծանոթ է դեռևս երիտասարդության տարիներ-

¹ «Օտվետական Վրաստան», 1941 թ., 13/2, № 36:

² Ավ. Իսահակյան, «Հանուն հայրենիքի», Նրեան, 1945, էջ 52—53:

³ Այսպիսի միտք է արձայնվում, ի միջի այլոց, և Իլիա Ճավճավաձեի «Հայ գիտնականները և քաղաքի աղաղակը» հոդվածում. «Մենք լավ գիտենք,—գրում էր Ճավճավաձեն,— որ վաղեմի Վրաստանի թուլությունն սկսվեց այն դժբախտ օրից, երբ Հայաստանը (երբեք պետություն) տապալվեց, մեր այդ երբեմնի անջրպետը հարավից: Մենք հյուսիսից էինք պաշտպանում Հայաստանը և հայերը մեզ հարավից (առանձին հրատ., Թբիլիսի, 1899, էջ 261. Իլիա Ճավճավաձե, Նրեան, լրիվ ժողովածու, հատ. Ա, Թբիլիսի, 1941, էջ 479):

⁴ Այստեղ հավանաբար ակնարկվում է «Գիրք թղթոց»-ի (7-րդ դ.) «Թուղթ շրջագայական տեսոն Արրահամու հայոց կաթողիկոսի»-ի մեջ հիշատակված հինավուրց այն սովորությունը, երբ հայերը հաղորդակից էին վրացիներին «յաղալթս», «ի կերակուրս», «յամպելիս», «ի բարեկամություն», «ի զահեկություն» և այլն (Գիրք թղթոց, Թբիլիսի, 1901, էջ 194), որը նույն 7-րդ դարում օգտագործել է և Մովսես Կաղանկատվացին իր «Պատմութիւն Աղուանից»-ի 2-րդ գրքի 47-րդ գլխում (տես Թբիլիսի հրատ., 1912, էջ 307):

գրքույկով՝ («Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, երկու հեքիաթ» Թբիլիսի, 1948, էջ 19—24)։

1949 թվին «Մնաթորի» № 12-ում լույս է տեսնում «Մեծ Ստալինին» բանաստեղծությունը՝ Իրակլի Աբաշիձեի թարգմանությամբ (էջ 35)։ Նույնը «Լիտերատուրա դա խելովներա» թերթի 1950թ. № 48-ում Արչիլ Սուրախանովի թարգմանությամբ։

Այս իսկ բանաստեղծությունը, ինչպես և «Ես երգիչ եմ—երկնի թի-թեռ» և «Ես որ մեռնեմ՝ ինձ կթաղեք»-ը, տողերիս գրողը վերածել է վրացերենի։

Բացի այս ամենից, Ավ. Իսահակյանի այլ և այլ երկերը տողերիս գրողի հանձնարարությամբ և ղեկավարությամբ, թարգմանվում են ղոց. Իվ. Շիրակաձեի («Աբու-Լալա—Մահարի», «Մեծ Ստալինին» և մի շարք ոտանավորներ), Մերի Մեսխիշվիլու («Շաքրո Վալիշվիլի») և այլոց աշխատակցությամբ։

* * *

Ավ. Իսահակյանի կյանքն ու գործունեությունն առատ նյութ է տվել բազմաթիվ գրողների և քննադատների՝ իրենց ելույթների համար, մասնավոր՝ վերջին տասնամյակի ընթացքում¹։

Վարպետին ձոն-բանաստեղծություններ ունեն նվիրած Ի. Գրիշաշվիլին (1941)² և երիտասարդ բանաստեղծ Ալեքսանդր Շանիձեն (1945)³, վերջինս գրել է վարպետի հայրենիքում՝ Լենինականում⁴։

Նախ տալիս ենք Իոսեբ Գրիշաշվիլու ձոնը՝ Մարտին Քարամյանի թարգմանությամբ⁵։

Աշխարհ եկար, երբ տակավին
Մութ էր, խավար ու սարսուռ,
Հուրն անկայծ էր,—ու չորհրդին
Արյուն էր հորդ տարածվում։
Ըսպասում էր երգիչ բոցին
Հայրենիքը սիրասուն։
Կյանքը հոգուդ վերքեր դրեց,
Դու ողբացիր վերավոր.
«Է՛յ, Մանթաշի նըշխուն հավքեր,
Իմ դարդըս որ՝ ձերն էղներ,
Ձեր էդ գառ-վառ, խառ-փետուրներ
Կը սենային, քանց զիշեր»։

¹ Այսպիսիք են Աբուտի հոգվածը «Լիտերատուրուլի Սաքարթվիլո»-ում 1940 թ. (№ 32), Ա. Բարաթելիի հոգվածը՝ «Կոմունիստի»-ում նույն թվին (№ 296), Սիմոն Ջիբո-վանու՝ «Լիտերատուրուլի Սաքարթվիլո»-ում, 1941 թ. (№ 5), Վանո Մուլուկիձեի՝ «Լիտերատուրա դա խելովներա»-ում 1945 թ. (№ 25), Սիմոն Ջիբովանու՝ «Կոմունիստի»-ում 1945 թ. (№ 160), Սուրեն Ավչյանի՝ «Մնաթորի»-ում 1945 թ. (№ 9) և այլն։

Սույն հոգվածների շարքին կարելի է կցել նաև նշանավոր բանաստեղծներ Սիմոն Ջիբովանու և Գրիգորի Լեոնիձեի կողմից վարպետին ձոնված հոգվածները ուսուցիչների լեզվով՝ «Заря Востока» թերթի էջերում (1940 թ. № 298, 1941 թ. № 33)։

² «Պիոների»-ի 1941 թ. № 4, էջ 4. Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ. Թբիլիսի, 1944, էջ 47—48։ Նույնի՝ Միհատորյակը, Թբիլիսի, 1949, էջ 111—112։

³ «Լիտերատուրա դա խելովներա», 1945 թ. № 41։

⁴ «Գրական հանգես», Թբիլիսի, 1941 թ., № 1, էջ 49։

⁵ «Սե-մուլթ ամպեր ճակտիդ զիզվան»-ից (1898)։

Երգ ու տաղեր դու երգեցիր
Քո վըշտահար քընարով.
Արդ մեր երկրում լայն ու անծիր
Ձայնդ է հընչում հոգեթով.
Մանթաշի բույրն այն նըբրածին
Մենք ըզգում ենք քո երգով։

Անունն ինչպես մեր թանկագին
Հովհաննեսի՝ վաղամահ,
Քո անունը մեր սըրտերին
Հարազատ է, մոտ հիմա.
Դուք ձայն տըվիք ժողովրդին,
Կաղնիներին բազմամյա։

Հար անթառամ դու կը մընաս,
Ձի ճամբադ էր միշտ արդար,
Գիտես սիրել—սիրով անհաս,
Ատել գիտես դառնարար.
Եղար ջըբում խոր ընկըզմած,
Բայց վառվեցիր երգով վառ։

Դու խաբույկն ես հայ երգերի,
Լույս ես սըփում ջահի պես.
Հասավ օրը քո իղձերի,
Քո խոհերի ջինջ ու վես.
Եղբայրության ոնց էմբիմ մի—
Դու միշտ մեզ հետ կը լինես։

Ահա և Ավ. Շանիձեի ձոնը՝ մեր թարգմանությամբ.

Արշալույսի ալ ժրպիտ ես,
Որ հյուսում ես հըստակ սեր.
Տաղի փընջով փըրփըրում ես
Դու՝ սիրելի ազգին մեր։

Քո մեղրահամ խոսք-ամոհմում
Ո՞վ չի ըզգա վարպետիդ։
«Կեցցեք»՝ Մենք էլ վըրաց հոգում
Մեծարում ենք պոետիդ։

Քեզ հիշում է անգամ՝ սիրով
Մեր հայրենի Քուռքն վետ,
Ուր հընչում է իր քընարով
Հովհաննեսը՝ հար-հավետ։

Պոետներըս Վըրաստանի
Ահա կանչդ կը կըրկենք,
Որով չըքնաղ մեր վաթանի
Հաղթանակը կը երգենք։

Ես կը մաղթեմ Հայաստանին՝
Եռանդ-էշխը չը պակսին.
Քո խաղերը առատ լինին՝
Լեռ ու դաշտում միշտ ասվին։

¹ Անհարկում է հովհ. Թումանյանին։

² Նույնպես անհարկում է հովհ. Թումանյանին։

Л. Меликсет-Бек

Аветик Исаакян и грузинская литература

Р е з ю м е

Один из крупнейших представителей армянской литературы—Аветик Исаакян весьма популярен в Грузии: Он пользуется особой любовью грузинского читателя, так как его творчество перекликается с творчеством выдающихся мастеров грузинской литературы—Н. Бараташвили, Ак. Церетели, Важа-Пшавела, И. Гришашвили и других. По своему идейному содержанию и тематике произведения А. Исаакяна близки и созвучны умонастроению, думам и чаяниям широких трудящихся масс Грузии.

Автор статьи указывает на некоторую идейную общность между „Мерани“ Н. Бараташвили и поэмой А. Исаакяна „Абу-Лала-Маари“. Он отмечает глубокий интерес А. Исаакяна к произведениям Н. Бараташвили, А. Казбеги и Важа-Пшавела.

Неоднократные поездки А. Исаакяна в Грузию дали ему возможность ознакомиться с великолепными памятниками древнегрузинской культуры, с фольклором, с историей героической борьбы грузинского народа за свою свободу и независимость. Хорошее знание грузинской действительности дало возможность А. Исаакяну написать „Грузинскую народную песнь“, „Песнь грузинского трубадура“, „Шакро Валишвили“ и „Песнь Тамары“, проникнутые искренним чувством уважения и любви к грузинскому народу.

В статье приведены весьма ценные и многозначительные высказывания А. Исаакяна о вековой дружбе между грузинским и армянским народами, об основах этой дружбы.

Автор характеризует А. Исаакяна как одного из лучших переводчиков произведений грузинских писателей Ак. Церетели, И. Гришашвили) на армянский язык.

В статье приведены данные, свидетельствующие о растущем интересе в Грузии к творчеству А. Исаакяна. Этот интерес особенно усилился после победы советской власти в двух братских республиках. О растущем внимании грузинского читателя к творчеству А. Исаакяна свидетельствуют приведенные в статье данные о переводе на грузинский язык произведений А. Исаакяна. Об этом же свидетельствуют статьи, очерки, стихи, посвященные грузинскими писателями (Г. Леонидзе, С. Чиковани, И. Гришашвили и другими) выдающемуся поэту армянского народа.

В заключение приводятся в армянском переводе стихотворения И. Гришашвили и Ал. Шанидзе, посвященные А. Исаакяну.

ՀՀ Ազգային գրադարան



NL0382512

100

70.018